Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 55:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

Հրահանգ №1-22 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին կից տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրված պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) 1. Ո՞ր ճակատամարտում էին փարավոն Ռամզես II-ը և խեթերի արքա Մուվաթալլի II-ը գլխավորում հակառակորդ զորքերը:

ա) Մագնեսիայի,

բ) Քադեշի,

գ) Գավգամելայի,

դ) Նիզիբինի:

(1) **2. Ի՞նչ է պատկերված նկարում ներկայացված քարակոթողի (ստելա) վրա:**

ա) Տասներկու աղյուսակների օրենքը,

բ) Համմուրաբի օրենքները,

գ) Տասը պատվիրանները,

դ) Թալմուդը:

(1) 3. Ո՞րը *չէր հանդիսանում* հին փյունիկյան քաղաք:

ա) Տյուրոսը,

բ) Բիբլոսը,

գ) Սայդան,

դ) Նինվեն:

(1) 4. Աքեմենյանների ո՞ր շահն էր արշավել հունական պոլիսների դեմ:

ա) Դարեհ I-ը,

բ) Խսրով III-ը,

գ) Պերոզ IV-ը,

դ) Կյուրոս III-ը:

(1) **5. Ո՞ր պոլիսում էր գործունեություն վարում Լիկուրգոսը:**

ա) Աթենքում,

բ) Կորնթոսում,

գ) Սպարտայում,

դ) Թեբեում:

(1) **6. Ինչպե՞ս է կոչվում Հռոմեական կայսրության գոյության առաջին շրջանը:**

ա) Դոմինատ,

բ) Տետրարխիա,

գ) Պրինցիպատ,

դ) Դուալիզմ:

(1) 7. Ո՞վ է մեծացել Քարթլիի էրիսմթավարի Ներսե II-ի արքունիքում:

ა) Գրիգոլ Խանձթելին,

ბ) Յակոբ Խուցեսին,

გ) Դավիթ Գարեջելին,

დ) Էվստաթի Մցխեթելին:

(1) **8. Ո՞ւմ կաթողիկոսության օրոք էր կառուցվում Սվետիցխովելի մայր տաճարը:**

ա) Արսեն I-ի,

բ) Աբրահամ I -ի,

գ) Էվդեմոզ I-ի,

դ) Մելքիսեդեկ I-ի:

(1) **9. Ո՞ր վրաց թագավորն է Գյանջայի (Գանձակի) դարպասը նվիրաբերել Գելաթիին:**

ա) Բագրատ III-ը,

բ) Գիորգի I-ը,

գ) Դավիթ IV-ը,

դ) Դեմետրե I-ը:

(1) 10. Ոսկե Հորդայի ո՞ր խանն է կռվել Լենկթեմուրի դեմ:

ա) Թողթամիշ,

բ) Հուլավու,

գ) Մանգու,

դ) Աբաղա:

(1) **11. Նկարազարդման վերաբերյալ ո՞ր տեղեկատվությունն է ճիշտ:**

ա) Արտացոլում է ֆեոդալական Եվրոպայում հաստատված երեք դասերի տեսությունը,

բ) պատկերված է Հռոմի պապի կողմից խաչակրաց արշավանքի մասնակիցների օրհնությունը,

գ) արտահայտում է միջնադարում ապոկալիպսիսի տարածված պատկերը,

դ) նկարագրում է ասպետին և վասալներին օծելու ծիսակարգը:

(1) **12. Ո՞ր տեղեկատվությունն է ճիշտ XIV դարի առաջին կեսին Վրաստանում առկա իրավիճակի մասին:**

ա) Սկսվեց երկթագավորության ժամանակաշրջան, որը տևեց մեկ դար,

բ) երկիրն ազատագրվեց մոնղոլների հարյուրամյա տիրապետությունից,

գ) ավարտվեց երկարատև հակամարտությունը Ղզլբաշների պետության հետ,

դ) վերսկսվեցին սելջուկներին երկրից վտարելու ջանքերը:

(1) **13. Ինչպե՞ս ավարտվեց 1444 թվականին օսմանների և եվրոպացիների միջև տեղի ունեցած Վառնայի ճակատամարտը:**

ա) Եվրոպացիների հաղթանակով և օսմանների վտարմամբ Բուլղարիայից,

բ) օսմանների հաղթանակով և Հունգարիայի թագավորության նվաճմամբ,

գ) եվրոպացիների հաղթանակով և սուլթան Բայազիդ I-ի գերեվարմամբ,

դ) օսմանների հաղթանակով և Վլադիսլավ թագավորի մահով:

(1) **14. Ո՞րն էր Մանդատուրթուխուցեսիի պարտականությունը Վրաստանի արքունիքում:**

ա) Ֆինանսների վերահսկողությունը,

բ) կարգուկանոնի պահպանումը պետությունում,

գ) քաղաքների ղեկավարումն ու կառավարումը,

դ) գահաժառանգի դաստիարակությունը:

(1) **15. Ո՞ր տեղեկատվությունն է ճիշտ Վարդերի պատերազմի վերջնական արդյունքի վերաբերյալ:**

ա) Անգլիայում իշխանության գլուխ անցավ Թյուդորների դինաստիան,

բ) Նորմանդական բարոնները ճանաչեցին Անգլիայի թագավորի գերիշխանությունը,

գ) Անգլիայի թագավորը խզեց կապերը կաթոլիկ եկեղեցու հետ,

դ) Շոտլանդիան ընդգրկվեց Անգլիայի կազմում:

(1) **16. Ո՞ր պետության հետ էր հակասության մեջ Օսմանյան կայսրությունը XVI դարում Մերձավոր Արևելքում ազդեցություն ձեռք բերելու համար:**

ա) Ֆաթիմյան Եգիպտոսի,

բ) Սեֆյան Իրանի,

գ) Թեմուրյանների կայսրության,

դ) Խորեզմշահերի պետության:

(1) **17. Լուարսաբ II-ի մասին ո՞ր տեղեկատվությունն է ճիշտ:**

ա) Նա ստիպված էր ենթարկվել սուլթանի պահանջին և գահ բարձրանալու դիմաց հրաժարվեց քրիստոնեությունից,

բ) գերության մեջ լինելով հրաժարվեց իսլամ ընդունելուց և սպանվեց շահի հրամանով,

գ) ապստամբության պարտությունից հետո որոշեց մեկնել սուլթանի մոտ և այդ քայլով մեղմել նրա զայրույթը,

դ) չվստահեց իրեն մահապատժի չենթարկելու շահի խոստումին և պատսպարվեց Մթիուլեթիում:

(1) **18. Ռուսաստանի ո՞ր կայսրի անվան հետ է կապված Ղրիմի խանության նվաճումը:**

ա) Պետրոս I-ի,

բ) Ալեքսանդր II-ի,

գ) Նիկոլայ I-ի,

դ) Եկատերինա II-ի:

(1) **19. Ռուս-վրացական հարաբերությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

ա) Գեորգիևսկի պայմանագրի (տրակտատ) ստորագրումից հետո ռուսական զորքերը մտան Քարթլ-Կախեթի, սակայն մի քանի տարի անց Ռուսական կայսրությունը խախտեց Գեորգիևսկի պայմանագիրը և դուրս բերեց իր զորքերը Վրաստանից,

բ) Պավել I-ի հրամանով ռուսական զորքը ներխուժեց Իմերեթի և ստիպեց Սոլոմոն II-ին ընդունել Ռուսաստանի հովանավորությունը, սակայն մի քանի տարի անց Պավել I-ը խախտեց նաև այս խոստումը՝ վերացրեց Իմերեթիի թագավորությունը, իսկ Սոլոմոն II-ին աքսորեց Ռուսաստան,

գ) Ղրիմի պատերազմից հետո Աբխազիայի իշխանությունում ստեղծված ծանր տնտեսական իրավիճակը հանգեցրեց գյուղացիական ապստամբության, որից օգտվեց Ռուսաստանի կայսր Նիկոլայ I-ը և վերացրեց Աբխազիայի իշխանությունը,

դ) Թուրքական մեծ պատերազմից հետո Ռուսական կայսրությունը վերջնականապես հրաժարվեց Վրաստանից, իսկ Ռուսաստանի դաշնակից Կախեթիի թագավորը բազմաքանակ շքախմբով պատսպարվեց Մոսկվայում:

(1) 20. 1878 թվականի Բեռլինի պայմանագրի վերաբերյալ ո՞ր տեղեկատվությունն է ***սխալ***:

ա) Ռուսաստանին փոխանցվեցին Արդահանն ու Ղարսը,

բ) Բաթումին հռչակվեց Պորտո-Ֆրանկո,

գ) Ճանաչեցին Ռումինիայի և Սերբիայի անկախությունը,

դ) Օսմանյան կայսրությանը փոխանցվեցին Ազովի նավահանգիստը և Ղրիմի թերակղզին:

(1) **21. Ինչպե՞ս էր կոչվում 1944 թվականին Բելառուսի տարածքում խորհրդային հրամանատարության կողմից իրականացված հարձակողական գործողությունը:**

ա) Բագրատիոնի,

բ) Կուտուզով,

գ) Սուվորով,

դ) Խմելնիցկի:

(1) **22. Ո՞վ էր ԽՍՀՄ առաջին նախագահը:**

ա) Խրուշչովը,

բ) Բրեժնևը,

գ) Անդրոպովը,

դ) Գորբաչովը:

Հրահանգ № 23-26 առաջադրանքների համար

Ժամանակագրական կարգով դասավորեք պատմական իրադարձություններն ու անձանց: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն նշված իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, հետևաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **23. Ժամանակագրական կարգով դասավորեք Արաբական խալիֆայության գոյության ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները:**

1. Տիզբոնի գրավումը
2. Ներխուժումը Պիրենեյան թերակղզի
3. Բաղդադի հիմնադրումը

(1) **24. Ժամանակագրական կարգով դասավորեք Հարյուրամյա պատերազմի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:**

1. Օռլեանի պաշարման վերացումը
2. Ժաննա դ'Արկի գերեվարումը բուրգունդացիների կողմից
3. Կառլ VII-ի թագադրությունը Ռեյմսում

(1) **25. Ժամանակագրական կարգով դասավորեք Ռուսական կայսրության օրոք Կովկասում նշանակված փոխարքաներին՝ ըստ նրանց կառավարման ժամանակի:**

1. Միխայիլ Ռոմանով
2. Միխայիլ Վորոնցով
3. Ալեքսանդր Բարյատինսկի

(1) **26. Ժամանակագրական կարգով դասավորեք պատմական աշխատություններ՝ ըստ դրանցում ներկայացված պատմական իրադարձությունների զարգացման ժամանակի:**

1. Ակակի Ծերեթելիի «Բաշի Աչուկի»
2. Կոնստանտինե Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աջը»
3. Միխեիլ Ջավախիշվիլիի «Արսենա Մարաբդելին»

Հրահանգ № 27 առաջադրանքի համար:

Աշակերտին տրված է քարտեզ: Սեփական գիտելիքների և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաններ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից չորսը (4) սխալ է: Դուք պետք է գտնեք բոլոր չորս սխալներն, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 27. Քարտեզն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում



Հարցերը տե՛ս հաջորդ էջում

Աշակերտին ուղղած հարցերը.	Աշակերտի տված պատասխանները.
27.1. Համաձայն քարտեզի՝ ո՞ր քաղաքն են գրավել երկու անգամ քարտեզի վրա նշված արշավանքների արդյունքում:	**27.1.** Հռոմ
27.2. Քարտեզի վրա ո՞ր ցեղի արշավանքներն են նշված սև գույնի սլաքներով:	**27.2.** Վեստգոթերի
27.3. Համաձայն քարտեզի՝ անվանե՛ք Աֆրիկայի մայրցամաքում գտնվող քաղաքը և այն վանդալների ցեղի կողմից գրավելու տարեթիվը:	**27.3.** Կարթագեն, 425 թվական
27.4. Համաձայն քարտեզի՝ ո՞ր կղզին է լքել կանաչ գույնով նշված պետությունը 410 թվականին և անվանե՛ք այդ կղզում գտնվող քաղաքը:	**27.4.** Բրիտանիա, Լուտեցիա
27.5. Համաձայն քարտեզի՝ անվանե՛ք այն պետությունները, որոնց տարածքներն ասպատակել է սև գույնի սլաքներով նշված ցեղը քարտեզի վրա պատկերված ժամանակահատվածում:	**27.5.** Արևմտյան Հռոմեական կայսրություն, Պոնտոսի թագավորություն

Հրահանգ № 28 առաջադրանքի համար: Ուշադիր վերլուծե՛ք նկարի տեղեկատվությունը և պատասխանե՛ք տրված հարցերին: Հաշվի՛ առեք, որ երկու նկարներում պատկերված է մեկ պատմական գործընթացի երկու դրվագ: Պատասխանները գրառե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 28. Նկարներն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

N1

N2

Երկու նկարները վերաբերում են պատմական մեկ իրադարձության

հարցերը տե՛ս հաջորդ էջում

Հարցեր.

(2) 28.1. Անվանե՛ք, թե որ երկու կողմերի հակամարտությունն է պատկերված №1 նկարում:

(2) 28.2. Անվանե՛ք №2 նկարում պատկերված պատմական փաստը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը նկարում առկա տեղեկատվությամբ:

(2) 28.3. Անվանե՛ք այն պատմական իրադարձության մասնակից կողմերի միջև հակամարտության ծագման պատճառն ու հետևանքը, որի երկու փուլերը պատկերված են նկարներում:

(1) 28.4. Նշե՛ք մեկ դասի թեմայի վերնագիր, որն ուսումնասիրելիս կօգտագործեք երկու նկարները:

Հրահանգ №29 առաջադրանքի համար: Ուշադիր ընթերցե՛ք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնե՛ք տեքստը և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանները գրե՛ք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 18:

Առաջադրանք 29. Պատմական փաստաթուղթն ու հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Հատված Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Զվիադ Գամսախուրդիայի 1991 թվականի ապրիլի 9-ի ելույթից

Այսօր մենք պետք է մտորենք մեր ազգի, մեր հանրապետության ապագա ճակատագրի մասին: Նախքան այսօրվա քաղաքական և իրավական խնդիրներին անցնելը, մի փոքր պատմական էքսկուրս կկատարեմ:

1918 թվականի մայիսի 26-ին Վրաստանի Ազգային խորհուրդը հռչակեց երկրի անկախությունը և ստեղծեց անկախ հանրապետություն: Ազգային խորհուրդն ընտրվել է դեռևս 1917 թվականի նոյեմբերին Վրաստանի Առաջին Ազգային համագումարի կողմից: Վրաստանի անկախության հռչակումից հետո Ազգային խորհրդին վստահվեց օրենսդիր պետական մարմնի գործառույթը: Ստեղծվեց կոալիցիոն կառավարություն: 1919 թվականի մարտին Ազգային խորհրդին փոխարինեց Հիմնադիր ժողովը, որի ընտրություններին մասնակցում էր ընտրողների ավելի քան 60 տոկոսը: Վրաստանի Հիմնադիր ժողովը 1921 թվականի փետրվարի 21-ին ընդունեց Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության Սահմանադրությունը:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականության կողմնորոշումն այն ժամանակ հակված էր դեպի Գերմանիա, ինչը բխում էր կոնկրետ իրավիճակի անխուսափելիությունից: Գերմանացիները շուտով լքեցին Վրաստանը: 1918 թվականի ավարտին Վրաստան մտան Անգլիայի զորքերը: Եվ՛ գերմանացիները, և՛ անգլիացիները, անշուշտ, առաջնորդվում էին ելնելով իրենց քաղաքական և տնտեսական շահերից, բայց սա չէր նշանակում օկուպացում նվաճման իմաստով, քանի որ ո՛չ Գերմանիան, ո՛չ էլ Անգլիան չեն վերացրել Վրաստանի անկախությունը:

Վրաստանի Հանրապետության անկախությունը հենց սկզբից բացասաբար ընդունվեց Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության կողմից: 1920 թվականի սկզբին Կարմիր բանակը ջախջախեց Դենիկինի զորքերը և հասավ Անդրկովկասի սահմաններին: Տարածաշրջանի խորհրդայնացման հեռանկարը իրական դարձավ: Ապրիլի

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

վերջին խորհրդային իշխանությունը հաստատվեց Ադրբեջանում: XI բանակի ղեկավարությունը անմիջապես բարձրացրեց Վրաստան ներխուժելու հարցը: Հենց այդ ժամանակ էլ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ սկսվեցին բանակցություններ Խորհրդային Ռուսաստանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու վերաբերյալ: Այն ձեռնտու էր նաև խորհրդային կառավարության համար, որն այդ ժամանակ հետ էր մղում Լեհաստանի և գեներալ Վրանգելի բանակների հարձակումները:

Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագիրը մշակվել և ուժի մեջ է մտել միջազգային նորմերի պահպանմամբ: Այս պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը առանց որևէ պայմանի ճանաչեց Վրաստանի անկախությունն ու ազատությունը:

Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության նկատմամբ Եվրոպայի հասարակական կարծիքի դրական վերաբերմունքը ամրապնդվեց Երկրորդ Ինտերնացիոնալի առաջնորդների այցով, որոնք 1920 թվականի աշնանը այցելեցին Վրաստան՝ անձամբ ծանոթանալու աշխարհի առաջին սոցիալ-դեմոկրատական կառավարության գործնական գործունեությանը:

Ադրբեջանում խորհրդային իշխանություն հաստատելուց անմիջապես հետո Կարմիր բանակը փորձեց խորհրդայնացնել Վրաստանը: Խորհրդային ղեկավարությունն այդ ժամանակ Վրաստանի խորհրդայնացումն աննպատակահարմար էր համարում, քանի որ դա կարող էր հանգեցնել միջազգային խնդիրների: 1921 թվականի սկզբին Խորհրդային Ռուսաստանի համար ստեղծված բարենպաստ միջազգային իրավիճակում՝ Լեհաստանի և Վրանգելի բանակների ոչնչացումը, Մեծ Բրիտանիայի հետ առևտրային համաձայնագրի նախապատրաստումը և այլն, մշակվեց Վրաստանում խորհրդային իշխանություն հաստատելու ծրագիր:

Վրացական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1989

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

Տեքստի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

թվականին ստեղծված հատուկ հանձնաժողովը հանգեց միանգամայն ճիշտ եզրակացության, որ Վրաստան զորքեր մտցնելն ու ամբողջ տարածքը նվաճելն իրավական տեսանկյունից իրենից ներկայացնում էր ռազմական միջամտություն (ինտերվենցիա) և օկուպացում:

Վրաց ժողովուրդը երբեք չի հաշտվել ստեղծված իրավիճակի հետ և պայքարել է կորցրած պետականությունը վերականգնելու համար:

1987 թվականի սկզբից Վրաստանում լայն տարածում գտավ զանգվածային բողոքի շարժումը, որի գագաթնակետն էր 1989 թվականի ապրիլի 4-9-ի ցույցերը և հանրահավաքները, որոնք բարբարոսաբար ցրվեցին կայսրության պատժիչ ուժերի կողմից:

Մարտի 31-ին Վրաստանում անցկացվեց հանրաքվե: Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովից ընդունվեց եզրակացություն, որը բացահայտեց Վրաստանում անցկացված հանրաքվեի ապշեցուցիչ արդյունքները: Հատկապես ուշագրավ են հանրաքվեին ոչ վրացի բնակչության մասնակցության հետ կապված որոշ մանրամասներ: Այդ տվյալներով հերքվում է նաև մեր թշնամիների կողմից արտասահմանում տարածված ողջ ապատեղեկատվությունը՝ Վրաստանում ոչ վրացի ազգային փոքրամասնությունների նկատմամբ իբր թե ճնշման և խտրականության մասին: Այստեղից երևում է, որ Վրաստանի ներկայիս իշխանությունը վրացիների հետ մեկտեղ աջակցում են նաև ոչ վրացիները: Մենք երախտագիտությամբ ենք ընդունում այս աջակցությունը և մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում մեր ոչ վրացի քույրերին ու եղբայրներին:

Նպատակահարմար ենք համարում, որ Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը աշխարհի քաղաքակիրթ ազգերի առջև հայտարարի Վրաստանի անկախ պետականության վերականգնումը՝ 1918 թվականի մայիսի 26-ի Անկախության մասին ակտի հիման վրա:

Անցնել հարցերին՝ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12

հարցերը տե՛ս հաջորդ էջերում

Հարցեր.

(1) **29.1.** Փաստաթղթում նշված տեղեկատվության հիման վրա, ո՞րն էր Ազգային խորհրդի լեգիտիմության հիմքը:

(1) **29.2.** Ինչո՞վ էր պայմանավորված գերմանացիների հեռացումը Վրաստանից 1918 թվականին:

(1) **29.3.** Համաձայն փաստաթղթի՝ ինչո՞ւ օտարերկրյա զորքերի ներկայությունը Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունում չպետք է համարվի նվաճում:

(1) **29.4.** Փաստաթղթում առկա տեղեկատվության հիման վրա՝ ո՞ր հարցի շուրջ էր աշխատում 1989 թվականին ստեղծված հատուկ հանձնաժողովը:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(1) **29.5.** Ո՞ր հարցին էր վերաբերում մարտի 31-ին անցկացված հանրաքվեն:

(1) **29.6.** Ըստ փաստաթղթի՝ ի՞նչ կարևոր հանգամանք բացահայտվեց մարտի 31-ի հանրաքվեի արդյունքներով:

(2) **29.7.** Համաձայն փաստաթղթի՝ ի՞նչ գործառույթ վստահվեց Ազգային խորհրդին մայիսի 26-ից հետո և ո՞ր մարմինը փոխարինեց այն հետագայում:

(2) **29.8.** Համաձայն փաստաթղթի՝ ո՞վ փորձեց խորհրդայնացնել Վրաստանը 1920 թվականին և ո՞վ էր դրան դեմ:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) 29.9. Նշե՛ք Վրաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև պայմանագրի ստորագրման կոնկրետ ամսաթիվը, և ըստ փաստաթղթի՝ ո՞րն էր այդ պայմանագրի կարևորագույն կետը:

(2) 29.10. Համաձայն փաստաթղթի՝ Խորհրդային Ռուսաստանի համար կոնկրետ ինչո՞ւմ էր կայանում 1921 թվականին միջազգային իրավիճակի դրական փոփոխությունը:

(2) 29.11. Ո՞ր թվականն է համարվում Վրաստանում խորհրդային իշխանության հաստատման օր և ինչո՞ւ:

(2) 29.12. Համաձայն փաստաթղթի՝ ի՞նչ ապատեղեկատվություն է տարածվում Վրաստանի իշխանության մասին 1991 թվականին, և ըստ ձեզ՝ ո՞րն էր դրա նպատակը:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին